ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-203) ՀՀ ԱԺ ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

h/h	*Առաջարկության հեղինակը*	*Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը*	*Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)*	*Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը*	*Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
1.	2.	3.		4.	5.
1.	Պատգամավոր Տարոն Սիմոնյան	Օրենքի 8-րդ հոդվածի լրացվող 2-րդ մաս	Օրենքի 8-րդ հոդվածի լրացվող 2-րդ մասի կարգավորումից (Օտարերկրացուն մուտքի վիզայի տրամադրման (ժամկետի երկարաձգումը) մերժումը, տրամադրված մուտքի վիզայի ուժը կորցրած ճանաչվելը կամ մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվելը) **բացառություն նախատեսել նաև** այն դեպքերի համար, երբ հանցագործություն կատարած օտարերկրացու մուտքի վիզայի տրամադրումը (ժամկետի երկարաձգումը) մերժվում է, տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում կամ մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվում է, եթե վերջինս գտնվում է հետախուզման մեջ:	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է